

վար կը ցատկէ, գլխիվայր գետինը կ'իյնայ եւ քանի մը բռպէ ալ այնպէս կմնայ: Ահա ասկէ փորձուած է, որ Եէնի Գաբուցիին գլուխն ամբողջ ամարմինէն ծանր է:

Սոյն թաղն երկու վարժարան ունի, մին մանչերու եւ միւսն աղջիկներու համար:

Այս վարժարաններն այժմ միացուած են ԳումԳաբուի վարժարաններուն հետ եւ մեծ յոյս կու տան, որ ապագային մէջ ալ չպիտի կրնան լաւագոյն վիճակ մ'ունենալ՝ եթէ հոգաբարձութեան ուսումնական անդամներն իրենց դերը կատարելու վախճան:

Երբ ազգային մեծ խնդիրներ երեւան կու գան՝ այս թաղն պատերազմի դաշտ կորոշուի: Սահմանադրութեան վրայօք վէճերուն եւ ուրիշ կարեւոր խնդիրներուն համար կարեւոր կոիւնէր տեղի ունեցած են հոս. անգամ մը կոիւն այնքան ծանր կերպարանք առաւ, որ Եէնի Գաբուցիի մը գլխէն աւելի ծանրացաւ եւ թաղին եկեղեցւոյն մէջ քսանէն աւելի անձեր վիրաւորուեցան:

Նախորդ թաղական խորհուրդն, որ վարժարանները բարեկարգելու պաշտօնով ընտրուած էր՝ եկեղեցւոյն կից փողոցն բարեկարգեց եւ հասարակաց գուարձութեան համար չխնայեց եւ ոչինչ: Անոր շնորհիւն է, որ եկեղեցւոյն կից հրապարակն ծառերով զարդարուեցաւ եւ այժմ պատիւ ունի տեսնել իւր վրայ պարոններ եւ օրիորդներ, որք ամառուան գիշերները հոս կիսմբուին եւ անմեղ զրօսանքներով ժամանակ կ'անցունեն: Նախորդ թաղական խորհուրդն իւր աշխատութեան պտուղն տեսնելով՝ բերնին ջուրերը կը վազցունէ. թաղականն է, որ կտեսնէ պտուղն, սակայն երիտասարդներն են, որ կքաղեն զայն:

Թաղիս ազգայիններն երկու կարգի կը բաժանուին. արհեստաւոր եւ դիրակեաց:

Արհեստաւոր մասն իւր պարապոյ ժամերն թաղին սրճարաններու մէջ նարտով եւ թուղթով կսպաննէ: Հոս ընդհանրապէս *իքի եիւզ* կը խաղան եւ այս խաղին մէջ այնքան համբաւ հանած են, որ եթէ ուրիշ գեղերու մէջ *իքի եիւզի* վրայօք վէճ մը ծագի՝ հոս կու գան վճիռ ընդունելու:

Արբեցութեան կողմէն նշանաւոր չեն – կէս օխա օղի խմելէն ետքը կզգան, թէ գաւաթ մը օղի խմած են – եւ բնաւ չեն կարող մրցիլ իրենց սահմանակից տէրութիւններուն հետ... թաղեցիներուն հետ պիտի ըստի...:

Դիրակեաց մասը դրսէն հանդարտ կերեւայ, բայց երբ թաղային խնդիր մը ծագի՝ անմիջապէս ասպարէզ կնետուի: